ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/31

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 11.09.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/31 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Լեմուր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեմուր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 11.09.2017թ. բողոքով հայտնել է, որ սույն թվականի օգոստոսի 1-ին ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի տառերով և թվերով գրված գումարների միջև անհամապատասխանություն, ուստի հիմք ընդունելով գնային առաջարկի տառերով գրված գումարը՝ «Լեմուր» ՍՊԸ-ն

ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի ապահովել Ընթացակարգի հրավերի 7.1 կետով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հայտի ապահովման չափը, քանի որ հրավերում հստակ սահմանված է, որ հայտի ապահովման գումարը հավասար պետք է լինի մասակցի գնային առաջարկի հինգ տոկոսի չափին:

Ընկերությունը գտնում է, որ հիմք ընդունելով վերոհիշյալ նորմը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը պարտավոր էր գնահատել անբավարար և մերժել վճարման պահանջագրի գումարը հրավերի 7.1 կետով և Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հայտի ապահովման չափն անհամապատասխան լրացնելու հիմքով, մասնավորապես՝ հայտի ապահովման գումարը հավասար չէ Ընկերության հայտով ներկայացրած գնային առաջարկի հինգ տոկոսի չափին:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը բողոքով խնդրել է անվավեր ճանաչել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, և «Լեմուր» ՍՊԸ-ին չհամարել նշված չափաբաժինների մասով ընտրված մասնակից:

«Լեմուր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Խորհրդին ուղղված 14.09.2017թ. ԴՎԱ/3083 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Հատուկ սարքերի և գործիքների» գնման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին սահմանված կարգով հայտ են ներկայացրել թվով 3 կազմակերպություններ, այդ թվում՝ «Լեմուր» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ընթացքում պարզվել է, որ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Լեմուր» ՍՊԸ-ի գնային առաջարկում տառերով արտահայտված գները չեն համապատասխանում թվերով արտահայտված գներին, մասնավորապես՝ 4-րդ չափաբաժնի մասով թվերով նշված է 680,000, իսկ տառերով՝ վեց հարյուր ութսուն, իսկ 5-րդ չափաբաժնի մասով թվերով նշված է 280,000, իսկ տառերով՝ երկու հարյուր ութսուն:

Առաջնորդվելով Ընթացակարգի հրավերի 8.5 կետով՝ հանձնաժողովը որոշել է հիմք ընդունել տառերով գրված գումարը և տվյալ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերության սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը), որոնք Ընկերության կողմից հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում Ընկերության այն դիրքորոշմանը, որ առաջարկվող հայտի ապահովման չափը գերազանցում է առաջարկվող գնի հինգ տոկոսը և դա հիմք է Ընկերության հայտը մերժելու համար, ապա Պատվիրատուն նշել է, որ նման պնդումը ընդունելի չէ, մասնավորապես Ընթացակարգի հրավերի 7.1 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին», ստացվում է, որ եթե մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը պակաս չէ առաջարկվող գնի հինգ տոկոսից, այսինքն, այն ապահովում է օրենսդրի կողմից սահմանված ռիսկի նվազագույն չափը, ուստի մասնակցի հայտը տվյալ հիմքով չի կարող մերժվել: Բացի այդ, ինչ հիմնավորմամբ մերժվի մասնակցի հայտը, եթե Պատվիրատուն անհրաժեշտության դեպքում զրկված չէ մասնակցի գնի հինգ տոկոսի չափով հայտի ապահովումը գանձելու հնարավորությունից: Ընկերության դիրքորոշմամբ առաջնորդվելու դեպքում գործնականում կարող են առաջանալ բազմաթիվ խնդիրներ, քանի որ հաճախ մասնակիցների կողմից առաջարկվող գնի հինգ տոկոս հաշվարկվող թիվը ամբողջից հետո կարող է ունենալ անվերջ մնացորդներ և ստացվում է, որ թիվը ցանկացած ձևով կլորացնելու դեպքում մասնակցի հայտը կմերժվի, քանի որ այն հավասար չի լինի հինգ տոկոսին: Նման մոտեցումը կարող է պատճառ դառնալ հրավերի պահանջներին համապատասխանող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերը մերժելու համար:

Նշված գրությամբ Պատվիրատուն ներկայացրել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով վերը նշված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համար կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Լեմուր» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Չափաբաժին-ների համարները	Ապրանքի անվանումը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
4	Ձեռքի հիդրավլիկ մամլիչ	680 000 Վեց հարյուր ութանասուն		680 000 Վեց հարյուր ութանասուն
5	Մոնտաժային սղոց	280 000 Երկու հարյուր ութանասուն		280 000 Երկու հարյուր ութանասուն

3. Ընկերությունը հայտի թիվ 10 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում, որի չափը կազմում է 48 000 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.2-րդ կետով արձանագրվել է, որ «Լեմուր» ՍՊԸ-ի գնային առաջարկում թվերով և տառերով նշված գումարները չեն համապատասխանում միմյանց, ուստի գնահատող հանձնաժողովն առաջնորվելով Ընթացակարգի հրավերի 8.1 կետով, հիմք է ընդունել տառերով գրված գումարը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.08.2017թ. կայացրած որոշմամբ «Լեմուր» ՍՊԸ-ին Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչել է 1-ին

տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, որոնք սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լեմուր» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Լեմուր» ՍՊԸ-ի 11.09.2017թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.09.2017թ. ԴՎԱ/3083 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդհոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Կարգի նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն

էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Նույն հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

«ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լեմուր» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, որի մեջ տառերով և թվերով գրված գումարների մեջ առկա է եղել անհամապատասխանություն: Մասնավորապես՝ Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի համար թվերով գինը նշվել է 680 000 ՀՀ դրամ, իսկ տառերով՝ վեց հարյուր ութանասուն

<< դրամ, 5-րդ չափաբաժնի համար թվերով գինը նշվել է 280 000 << դրամ, իսկ տառերով՝ երկու հարյուր ութանասուն << դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, առաջնորդվելով Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք է ընդունել տառերով գրվածը, որը տվյալ դեպքում 4-րդ չափաբաժնի համար կազմում է 680 << դրամ, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ 280 << դրամ:

Միևնույն ժամանակ Ընկերության կողմից հայտի թիվ 10 հավելվածով ներկայացվել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագրի տեսքով, որին կից վճարման պահանջագրի մեջ որպես հայտի ապահովման գումար՝ տուժանք, նշվել է 48 000 << դրամ:

Այսպես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ***հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը, որը կազմում է 48 000 << դրամ չի կազմում գնային առաջարկի հինգ տոկոսը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման չափը հաշվարկվել է գնային առաջարկի մեջ թվերով նշված գնի նկատմամբ (680 000+280 000/5%=48 000), մինչդեռ Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որպես հիմք ընդունվում է տառերով նշվածը:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը չի կազմում գնային առաջարկի հինգ տոկոսը, որպիսի պահանջը սահմանված է հրավերով, հետևաբար Ընկերության հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Կարգի 40-րդ եկտի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն հայտերի բացման նիստում ենթակա էր մերժման:

Խորհուրդը գտնում է, որ «Լեմուր» ՍՊԸ-ի հայտը չի կարող գնահատվել բավարար, ուստիև նման պայմաններում Ընկերությունը չի կարող ճանաչվել ընտրված մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 11.09.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 11.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել.

1. դադարեցնել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Լեմուր» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը՝ ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

2. դադարեցնել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով «Լեմուր» ՍՊԸ-ի հետ Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**